յանիստ՝ առ ի հրաման հանել յինքնակելէն Սարակենացւոց ըստ բնաւորեալ ծիսի»։

«Եւ այսպիսի դասն ի բազմավրդով ժամանակի եղև աւարտումն սորա. որոյ զսկիզբն եդաք ի Բերիայ. և հասուցաք յանկ ի հայրենի գաւառս մեր ի Սիս. ի մէջ Ադինասարաս գերամբիծ սրբոյ գահին Կիւլիկիոյ. ուստի աղաչեմ զքեզ սիրելիքդ իմ՝ ընկալարուք սիրով զաշխատութիւնս մեր՝ իբր ի տատասկէ թուզ. և կամ ի մորենւոյ խաղող քաղելով. և հայցեցէք Քրիստոսէ չառնել զերկս վաստակոց իմոց. և արժանացուսցէ զմեզ անտրտում և յարազուարձ բերկրանօք փառաւորել զամենասուրբ անունն իւր՝ որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն»։

«Արդ՝ որովհետև ի բնութեամբ բարւոյն պարգևեալ ի մարդկայինս ազգ երեք օժիտքս այսոքիկ հոգւոյ (այսինքն) բան՝ ցասումն. և ցանկութիւն պարգևեալ է յԱստուծոյ առ ի ցանկալ՝ և ո՛չ թէ առ չարն՝ ապա ցանկալով իմ ուրեմն ի նոյն բարութեան հետևումն՝ յորժամ տեսանէլի զգիրքս այս ցանկալի որ է մեկնութիւն Յօնանու որդւոյն Ամաթեայ՝ արարեալ ի լուսահոգի գերիմաստ Եփրեմ հանգուցեալ Վեհին՝ որոյ տէր լուսաւորեսցէ զհոգին. դասելով ի կաճառս Հայրապետաց. ուստի ի վաղուց իսկ հետէ կամ էր ինձ օրինակել՝ բայց ոչ առնուի յանձն իմ վասն աստանդական կենացս. զի ո՛չ առնելով անսուաղ կեանք. Այլ սակի եղև թոյլատրեցեալ. բայց սակայն յորժամ խաղացեալ չու արար Սրբազան Վեհն մեր Տէր Թէոդորոս Գերնտիր և երիցս երանեալ կաթիւղիկոսն հանդերձ սիրազուն միաբանիւք ուխտի ի միաբանութեանցն Կիւլիկիոյ՝ ի բերդն Լեռնի մեծի. որ է Ղալա-տէրէսի՝ սա ի զբօսնուլ յեղանակի ամառան. Ցայնժամ հրապուրմամբ ստիպեցին զիս՝ յարգելի և պատուական եղբարքն իմ. մանաւանդ այս քաղաքակիցն իմ անձկալի եղբայրն իմ ըստ աննիւթին. Տէր Կարապետ շնորհապերճ և գեր յարգոյ վարդապետն. որ և Եպս. Մեծին Ատանայու. և ի գործակալութիւն սրբոյ Աթոռոյն շնորհատուի. ի ձեռնարկութիւն այսօրինակ գրքուկիս ցանկալի առ ի գաղափարել՝ որ և ոչ հանդուրժեալ իմ ստիպմանց նազելի եղբարցն իմոց մե-